ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 26.11.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-ԷՍ-2018/167

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 09.11.2018թ. թիվ 26-3/20455-18 գրությամբ ՀԿՄ «ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 01501855) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ կրթության և գիտության նախարարության 06.11.2018թ. թիվ 04/31.2/16908-18 գրության հիման վրա, 09.11.2018թ. նախաձեռնել է ՀԿՄ «ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>ՀՀ կրթության և գիտության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ կրթության և գիտության նախարարությունը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 06.11.2018թ. թիվ 04/31.2/16908-18 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից 2018 թվականի հոկտեմբերի 22-ին գնանշման հարցման ընթացակարգով «ՀՀԿԳՆԳՀԱՊՁԲ-18/19» ծածկագրով կազմակերպված բրայլյան համակարգով հարմարեցված դասագրքերի գնման գործընթացին հայտ է ներկայացրել ՀԿՄ «Հրատարակչություն» ՍՊԸ-ն և ճանաչվել որպես ընտրված մասնակից: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 13-րդ կետը, վերջինիս ս.թ. հոկտեմբերի 29-ին Armeps էլեկտրոնային եղանակով ներկայացվել է պայմանագրի շնորհման ծանուցում, ինչպես նաև կնքվելիք պայմանագրի նախագիծը: Սակայն, ՀԿՄ «Հրատարակչություն» ՍՊԸ-ն մերժել է պայմանագրի շնորհման ծանուցումը և 2018թ նոյեմբերի 3-ի գրությամբ տեղեկացրել, որ հրաժարվում է պայմանագրի նախագիծը կնքելուց, պատճառաբանելով, որ պայմանագրով ապրանքների մատակարարման համար նախատեսված ժակմետը խիստ կարճ է:»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Արմեն Ավետիսյանը:

3. <u>ՀԿՄ «Հրատարակչություն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը դիմել է ՀԿՄ «Հրատարակչություն» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով վերջինիս ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 09.11.2018թ. թիվ 26-3/20455-18 գրությամբ Բողոքներ քննող անձի մոտ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության գրավոր դիրքորոշումը, սակայն վերջինիս կողմից որևէ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Ընկերության տնօրեն Թելման Բոյաջյանը և ներկայացուցիչ Սեմիկ Մարգարյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/167 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 09.11.2018թ. թիվ 26-3/20455-18 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ կրթության և գիտության նախարարության 06.11.2018թ. թիվ 04/31.2/16908-18 գրությունը, «ՀՀԿԳՆԳՀԱՊՁԲ-18/19» ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՀՀԿԳՆԳՀԱՊՁԲ-18/19» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 22.10.2018թ. նիստի թիվ 2, 29.10.2018թ. նիստի թիվ 3, 05.10.2018թ. նիստի թիվ 4 արձանագրությունները, ՀԿՄ «Հրատարակչություն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը.

ՀՀ կրթության և գիտության նախարարության կարիքների համար բրայլյան համակարգով հարմարեցված դասագրքերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀԿԳՆԳՀԱՊՁԲ-18/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) մասնակցության հայտ է ներկայացրել ՀԿՄ «Հրատարակչություն» ՍՊԸ-ն՝ Ընթացակարգի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով:

Հանձնաժողովի 22.10.2018թ. նիստի թիվ 2 արձանագրության 2.1 կետի համաձայն՝ ՀԿՄ «Հրատարակչություն» ՍՊԸ-ի հայտը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան:

Ընթացակարգի շրջանակներում ՀԿՄ «Հրատարակչություն» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով առաջարկված գնային առաջարկները կազմել են համապատասխանաբար՝ 518,700 ՀՀ դրամ (առանց ԱԱՀ), 367,500 ՀՀ դրամ (առանց ԱԱՀ), 240,450 ՀՀ դրամ (առանց ԱԱՀ), 225,750 ՀՀ դրամ (առանց ԱԱՀ):

29.10.2018թ. նիստի թիվ 3 արձանագրության 1.3 կետով Հանձնաժողովը որոշել է ՀԿՄ «Հրատարակչություն» ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար և վերջինիս հայտարարել ընտրված մասնակից:

Նույն արձանագրության 1.4 կետով հանձնաժողովը որոշել է հաստատել պայմանագիր կնքելու մասին հայտարարության տեքստը և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետը՝ առանց անգործության ժամկետ սահմանելու ընտրված մասնակցին ARMEPS համակարգով ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Պատվիրատուն 29.10.2018թ. ծանուցել է ՀԿՄ «Հրատարակչություն» ՍՊԸ-ին՝ ներկայացնելով պայմանագրի նախագիծը և առաջարկելով այն ստանալու օրվանից 10 աշխատանային օրվա ընթացքում ՀՀ կրթության և գիտության նախարարություն ներկայացնել ստորագրված պայմանագիրը և պայմանագրի ապահովումը:

Հանձնաժողովը 05.11.2018թ. նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետով արձանագրել է, որ ՀԿՄ «Հրատարակչություն» ՍՊԸ-ն հրաժարվում է պայմանագիրը կնքելուց և որոշել է Ընթացակարգը հայտարարել չկայացած:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ)

- 32-րդ կետի 14-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին:

ՀՀ կրթության և գիտության նախարարության կարիքների համար բրայլյան համակարգով հարմարեցված դասագրքերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀԿԳՆԳՀԱՊՁԲ-18/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի՝

• 9.5 կետի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

• 9.6 կետի համաձայն՝ պայմանագիր կնքելու վերաբերյալ պատվիրատուի առաջարկը ստացած ընտրված մասնակիցը համակարգի միջոցով ընդունում կամ մերժում է իրեն ներկայացված առաջարկը:

Ընթացակարգի քննության նպատակով Բողոքներ քննող անձի մոտ կայացած նիստի ժամանակ Ընկերության տնօրենը հայտնեց, որ Ընկերությունը՝ Ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչվելուց և Պատվիրատուից պայմանագիր կնքելու առաջարկն ստանալուց հետո, օբյեկտիվորեն գնահատելով իր առկա ներուժը և պայմանագրով նախատեսված ժամկետների սղությունը, եկել է այն եզրահանգման, որ ի վիճակի չի լինի կատարել պայմանագրով ստանձնած պարտավորությունները սահմանված ժամկետներում: Ուստի, որպեսզի չձախողվի պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումը և Ընկերությունը չկրի էլ ավելի խոշոր վնասներ, Ընկերությունը որոշել է հրաժարվել պայմանագրից: Միաժամանակ, Ընկերության տնօրենը հայտնեց, որ ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 23.03.2018թ. թիվ 31-Ա որոշմամբ Ընկերությունը հանդիսանում է «Հաշմանդամների համար հատուկ տառատեսակներով /բրայլյան/ գրքերի, ամսագրերի տպագրության, տետրերի պատրաստման և «Խոսող» գրքերի ձայնագրության ծառայությունների» շուկայում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք)

• 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

• 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող անձի մոտ՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ

կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

- 36-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:
- 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում նույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ՀԿՄ «Հրատարակչություն» ՍՊԸ-ն ընտրված մասնակից է ճանաչվել Ընթացակարգի 1-ից 4-րդ չափաբաժինների մասով, սակայն որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիրը կնքելուց:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ առկա է ՀԿՄ «Հրատարակչություն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված հիմքը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով, 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1.ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 09.11.2018թ. թիվ 26-3/20455-18 գրությամբ ՀԿՄ «ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 01501855) գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. ՀԿՄ «ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ